

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

### ՀՀ Լոռու մարզպետի մոտ մարզի համայնքների ղեկավարների հետ անցկացված խորհրդակցության

15.03.2018թ.

ք.Վանաձոր

#### Մասնակցում էին

Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ

Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ

Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ

Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար

Հ.Պապոյանը, Ա.Զանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Վ.Դոխոյանը, Հ.Մկրտչյանը - մարզպետարանի  
աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Լոռու մարզի համայնքների ղեկավարները

#### Օր ա կ ա ր գ ու մ`

1. Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների մասին  
/Զեկ. Հ.Պապոյան/

2. Համայնքներում փաստացի գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների հետ  
աղբահանության պայմանագրերի կնքման մասին  
/Զեկ. Դ. Մանուչարյան/

3. Համայնքներում առկա նպատակային նշանակությամբ չօգտագործվող համայնքային և  
մասնավոր գույքի (արտադրական օբյեկտների, շենքերի և շինությունների, բացառությամբ`  
բազմաբնակարան շենքերի և առանձնատների) վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու  
մասին  
/Զեկ.Դ. Մանուչարյան/

4. Համայնքների զարգացման 5-ամյա ծրագրերի և 2018թ. տարեկան աշխատանքային  
պլանների կազմման մասին  
/Զեկ. Հ. Մկրտչյան/

5. Համայնքների կողմից սուբվենցիոն ծրագրերի ներկայացման մասին  
/Զեկ. Հ. Մկրտչյան/

6. «Մաքուր Հայաստան» ծրագրի իրականացման մասին  
/Զեկ. Ա. Զանազյան/

7. Համայնքներում շինարարական աշխատանքների լիակատար հաշվառում իրականացնելու  
մասին  
/Զեկ. Ա. Զանազյան/

8. Մարզում պարարտանյութերի, սերմացուների և դիզելային վառելանյութի բաշխման  
գործընթացի մասին  
/Զեկ. Գ.Հակոբյան/

9. Համայնքը սպասարկող անասնաբույժերի ընդունման կարգի մասին  
/Զեկ. Գ.Հակոբյան/

## Ա Ն Ա Ջ Ա Ր Կ Վ Ե Գ`

### Լոռու մարզի համայնքների ղեկավարներին

1. Միջոցներ ձեռնարկել 500 000 դրամից ավել պարտավորություններ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարումներ կատարելու ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում գանձումներն իրականացնել դատական կարգով, կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն ներկայացնել մինչև ամսվա վերջ:

2. „Մաքուր Հայաստան,, ծրագրի շրջանակներում անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել համայնքներում աղբահանության աշխատանքների պատշաճ իրականացման, ինչպես նաև աղբավճարների գանձման և պայմանագրերի կնքման ուղղությամբ:

3. Համայնքների հողօգտագործողներին տեղեկացնել պարարտանյութերի, սերմացուների և դիզելային վառելանյութի բաշխման գործընթացի վերաբերյալ, հաշվի առնելով, որ բաշխումը իրականացվելու է անհրաժեշտ գումարների հավաքագրման և դրանց փոխանցումներից հետո:

4. Միջոցներ ձեռնարկել համայնքներում սպասարկող անասնաբույժերի ընդունման և նրանց հետ պայմանագրերի կնքման ուղղությամբ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ